



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ. ՄԱՐԿՈՆԵՐՆ  
Գ. ԱՅՈՒԲՈՆ

Բ Ա Մ Բ Ա Կ Ի

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՅԵՎ ՊԱՅԲԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ

ՊԵՏՐՈՍ—1930—ՅԵՐԵՎԱՆ





632 : 633.51 (47.925)

Ս  
Lmuy,

633.51:632 (47.925)

**ԲԱՄԲԱԿԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱՆՑ ԴԵՄ**

A  
4298

21997



**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ՅԵՐԵՎԱՆ — 1980**

Հրատ. № 1186

ՊԵՏՐՉԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

---

Գրառեպլ. № 3032 (բ.) Պատվ. № 183 Տիրաժ 5000

## ԻՆՉՈՒԻ ՅԵ ԱՆՎՐԱԺԵԾՑ ՊԱՅԲԱՐԵԼ ՎՆԱՍԱ- ՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Պայտարը վնասատուների դեմ՝  
պայտարե բեռնափոխան բարձ-  
րացման համար:

Վնասատուների հասցրած մնասը Հայաս-  
տանի բամբակագործությանը տարեկան հաս-  
նում ե հարյուր հազարավոր ուրբլիների, և  
նրանց դեմ պայքարի կազմակերպումն ունի  
մեծ նշանակություն վոչ միայն ամեն մի ան-  
հատ տնտեսության, այլ և մեր ամբողջ ժողո-  
վրըղա-տնտեսության համար:

Պայքարի հաջող կազմակերպումը պահան-  
ջում ե կոլլեկտիվ աշխատանք:

Վոչ մի կոպեկի արժեք չունի պայքարը,  
լեթե այն տարվում ե ցիրուցան, անհատ  
տնտեսությունների կողմից, վորովհետև լեթե  
հարևան արտերից մեկում տարվում ե պայքար,  
խսկ մյուսում վոչ, ապա վերջնից մնասատուն  
հեշտությամբ կարող ե նորից անցնել այն դաշ-  
տը, վորտեղ պայքարը կազմակերպված եր:

Վնասատուներին վոչնչացնելու համար հարկավոր և կոլլեկտիվ, համառ աշխատանք: Կոլլեկտիվ տնտեսութիւնների կազմակերպումը կհետացնի վնասատուների դեմ պայքարի կազմակերպման գործը:

Բամբակի ֆնասատուների թիվը շատ և, բայց մենք կխոսենք այն ֆնասատուների մասին, վորոնք տարածված են Հայաստանում, և վորոնց հասցրած ֆնասը տարեկան հարյուր հազարավոր ռուբլիներով և հաշվվում:

### «ՉՈՌ» (ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՏԻՉ)

Բամբակի ամենավտանգավոր թշնամին Հայաստանում «չոր» հիվանդութիւնն է: Այս հիվանդութիւնն առաջ և բերում հասարակաչքով հազիվ տեսանելի, բաց-դեղնավուն գույնի տիզը, վորը ձմեռելով հասուն վիճակում զանազան մոլախոտերի, թափված, կուչ յեկած տերեւների ու հողի ճեղքվածների մեջ և այլն, վաղ գարնանը դուրս և գալիս իր ձմեռելու տեղից, սկսում և սնվել դաշտում յեղած զանազան մոլախոտերով:

Հետագայում նրանք բազմանալով անցնում են բամբակի և մի շարք ուրիշ կուլտուրական բույսերի վրա, ինչպես, որինակ, լոբու, դդումի, սեխի, վարունգի, դուդմայի և այլ բույսերի

վրա ու խոշոր վնաս հասցնում նրանց: Տիզերը շատ արագ կերպով են բազմանում. ամեն մի եգ տիզ ածում է 100—120 փոքրիկ ձու, վորոնք փայլուն բաց-կանաչ գույնի հեղուկի կաթիլի յեն նման:

Ձվից 3—7 որ անց դուրս են գալիս տիզի թրթուրները, վորոնք տարբերվում են հասուն տիզից նրանով, վոր ավելի փոքր են և դանդաղաշարժ:

3—6 որվա ընթացքում նրանք մեծանում են և դառնում են հասուն տիզեր:

Տարեկան ամեն մի եգ տիզ տալիս է 15—20 սերունդ, այնպես վոր գարնան ամեն մի եգ տիզից ստացվում են անթիվ տիզեր:

Իհարկե սրանցից մեծ մասը զանազան պատճառներից վոչնչանում են, բայց նրանք այնքան են շատ լինում, վոր կենդանի մնացածների հասցրած վնասը միշտ ել զգալի յե լինում: Վնասն արտահայտվում է նրանում, վոր նրանք տեղավորված լինելով տերևի ցածի յերեսում, բարակ թելիկներից գործած վոստայնների տակ, ծծում են տերևի հյուսթը, վորից տերևի վերևի յերեսում առաջանում են կարմիր բծեր: Այդ բծերը մեծանալով ծածկում են ամբողջ տերևի մակերեսը:

Հետագայում կարմրած տերևները զորշա-

նում, չորանում, կուչ գալիս և թափվում են։  
 Հետևանքը լինում է այն, վոր բույսը  
 զրկվելով տերևներից՝ թուլանում է և վատ բերք  
 տալիս։ «Հոռի» ուժեղ զարգացման տարիներում,  
 յերբ համապատասխան միջոցներ ձեռք չեն  
 առնվում, բամբակի արտն ամբողջովին տերևա-  
 թափ է լինում, քիչ ծաղիկներ և կնգուղներ են  
 առաջանում, յեղածներն էլ վատ են զարգա-  
 նում, և բերքը փոխանակ 60—70 փթի, ստաց-  
 վում է 10—20 փութ։

Միայն ժամանակին յեվ հաջող կազմա-  
 կերպված պայքարը կարող է ըամբակացանին  
 ազատել այս շարիքից։

Նկատված է, վոր «չոռն» ավելի շատ է  
 տարածվում և մլաս հասցնում այն դաշտերում,  
 վորոնք վատ են մշակվում և ծածկված են լի-  
 նում մուլախոտերով, հետևապես «չոռի» դեմ  
 պայքարի ամենահիմնական միջոցը բամբա-  
 կի դաշտերի կանոնավոր մշակումն է. դրա հա-  
 մար հարկավոր է՝

1. Աշնանը դաշտում և միջնակներում մնա-  
 ցած մուլախոտերը, ինչպես և բամբակի մնացած  
 ցողունները, տերևները և առհասարակ դաշտում  
 մնացած բուսական բոլոր մնացորդները հավա-  
 քել և վոչնչացնել։

2. Կատարել աշնան խորը հերկ, իսկ գար-  
 նանը թիթև հերկիլ և ցանել առողջ սերմեր։

3. Բամբակի արտը պարարտացնել և շարքացան անել:

4. Քաղհանը և ջրելը ժամանակին և կանոնավոր կատարել:

Այս բոլոր աշխատանքների հետևանքով բամբակի բույսն ստացվում է առողջ, դիմացկուն և քիչ է մնասվում զանազան մնասատուներից և հիվանդություններից, նամանավանդ «չոռից»:

Յեթե բամբակի դաշտում չերևաց «չոռը», պնտք է դիմել քիմիական պայքարի կազմակերպման:

Այս տարի Եջմիածնում կատարած Անդրբամբակկոմի գիտա-հետազոտական միջատաբանական կայանի մի շարք փորձերը ցույց տվեցին, վոր «չոռի» դեմ պայքարելու ամենաձեռնտու և լավագույն միջոցը, յեղած միջոցներից, ծծմբի փոշին է, յեթե այն կատարվում է իր ժամանակին և կազմակերպված ձևով: Ըստ նույն հիմնարկի տվյալների փոշոտումը պիտի կատարել հետևյալ կերպ:

Առաջին փոշոտումը պիտի կատարել այն ժամանակ, յերբ դաշտում սկսում են յերևալ «չոռի» առաջին նշանները (կարմիր բծեր տերևների վրա), չսպասելով, վոր այն տարածվի՝ անմիջապես սպառնալով բամբակի բերքին:

Առաջին փոշոտման ժամանակ, յերբ բույսերը փոքր են, և «չոռի» վարակումը թուլլ է, մեկ հեկտարի փոշոտման համար հարկավոր է վերցնել 24 կիլոգրամ (1½ փութ) ծծմբի փոշի:

Բայց վորովհետև ծծմբի փոշին չի ազդում «չոռի» տիզի ձվերի վրա, նրանցից 3—7 որ անց դուրս են գալիս նոր տիզեր, վորոնց վոչնչացնելու համար հարկավոր է առաջին փոշոտումից 6—7 որ անց կատարել 2-րդ փոշոտումը, այս անգամ վերցնելով մեկ հեկտարին 32 կիլոգրամ (2 փութ) ծծմբի փոշի:

Յեթե նկատվում է, վոր «չոռը» շարունակում է տարածվել, պիտի փոշոտումը կրկնել 3-րդ անգամ:

Փոշոտումը պետք է կատարել խաղաղ ժամանակ, լավ է այն կատարել առավոտյան վաղ, յերբ քամի չկա, և ծծմբի փոշին հավասար կերպով է նստում բամբակի տերևների վրա:

Փոշոտումը կատարում են հատուկ փոշոտիչների միջոցով (տիպ-տոպ, տրեմաս, գրանմարկանների)՝ աշխատելով փոշոտել բամբակի տերևների ցածի կողմից:

Արևի ճառագայթների ազդեցության տակ ծծմբի փոշուց առաջանում են թունավոր գազեր, վորոնք և սպանում են տիզերին:

Յեթե փոշոտումից հետո ուժեղ անձրևներ են գալիս, պետք է փոշոտումը կրկնել:

Նախքան փոշոտման աշխատանքներին անցնելը հարկավոր է հավաքել և վոչնչացնել ինչպես բամբակի դաշտում գտնվող, այնպես էլ միջնակներում և շրջակայքում գտնվող բոլոր մուխոտները:

Յեթե այդ չի արված, պիտի փոշոտել նաև մուխոտները:

### ԱԳՐՈՏԻՍ

Բամբակի մյուս աչքի ընկնող վնասատուն Հայաստանում ագրոտիսի թրթուրն է, վորը հանդես է գալիս ամեն տարի Ջանգիրասարի խոնավ (գինա) հողերում (Շորլու, Դեմուրչի և Մեխմանդար, Վերին և Ներքին Խաթունարխաներ, Ղարաղլլաղ և այլն):

Ագրոտիսի թրթուրը ձմեռում է չհասունացած թրթուր հասակում, միջնակներում գրունդվող մուխոտների արմատների արանքներում:

Թրթուրը լինում է մոխրագույն, հասակն առած ժամանակ ավելի մուգ գույն է ստանում: Մարմնի յերկարութունը համնում է 4—5 սանտիմետրի:

Գարնան տաք յեղանակներին աշխուժանում են, սկսում են սնվել մուխոտներով, ապա

անցնում են նոր ցանված բամբակի դաշտերը: Ճերեկները թագնվում են հողի տակ և դուրս գալով գիշերները՝ սկսում ուտել բամբակի նոր ծլած սերմերն ու մատաղ ցողունները: Փոքր թրթուրները մտնում են նոր ծլած սերմերի մեջ և ուտում շաքիլները, վորից նոր դուրս յեկած առաջին զույգ տերևների վրա ստացվում են յերկու միատեսակ (սիմմետրիկ) անցքեր:

Թրթուրները կտրում են նաև ցողունի հողի վերևի շերտում գտնված մասը, զրկելով բույսը հետագա աճելու ընդունակութունից: Սրա հետևանքը լինում է այն, վոր բամբակը չի կանաչում, և ստիպված են լինում նույն դաշտը 2-րդ և նույնիսկ 3-րդ անգամ ցանելու:

Թրթուրը մեծանալով՝ մալխսի վերջին դառնում է հարսնյակ, վորից 15—20 որ անց դուրս են գալիս թիթեռներ. վերջիններս թռչելով գիշերները նստում են զանազան մոլախոտերի վրա և ածում են ձվեր՝ թվով 300—500 հատ: Ձվերից 5—6 որ անց դուրս են գալիս թրթուրներ, վորոնք արդեն բամբակին վնաս տալ չեն կարող:

Նկատված է, վոր այս վնասատուն մեզ մոտ տալիս է 2—3 սերունդ, բայց, ինչպես վերևում տեսցինք, բամբակին վնասում է գարնան (ձրմեռած, սերունդը):

## Պ ա յ Գ ա Ր

1. Պետք է վոչնչացնել ինչպես բամբակի դաշտում, նույնպես և միջնակներում գտնված բոլոր մոլախոտերը:

2. Աշնան խոտը հերկ պիտի կատարել, հերկելով միջնակները, վորովհետև, ինչպես վերեվում ասացինք, թրթուրները ձմեռում են այնտեղ. հերկի շնորհիվ թրթուրները կամ ընկնում են հողի խորը շերտերը և կամ դուրս գալով հողի մակերես՝ վոչնչանում են ցրտից և զանազան պատճառներից: Յեթե չնայած այս ձեռք առած միջոցներին՝ դաշտում փասատուն դարձյալ լերևում է, հարկավոր է դիմել պայքարի քիմիական և մեխանիկական միջոցների, վորոնք կայանում են հետևյալում.

1. Դաշտերի չորս կողմը պետք է փորել առուններ  $\frac{1}{4}$  մետր լայնությամբ և նույնքան ել խորությամբ: Փորելու համար հարկավոր է նախ մի լերկու անգամ գութանով գնալ ու գալ՝ վարակված արտի շուրջը բաց անելով ակոս և ապա բահերի միջոցով դուրս գցել այնտեղից հողը՝ լցնելով դեպի վարակված դաշտի կողմը:

Առվի պատերը պետք է անել ուղղահայաց, վորպեսզի նրա մեջ ընկած թրթուրները չկարողանան նորից դուրս գալ:

Առուներ փորելն ունի այն նպատակը, վոր առուներով շրջապատելով վարակված դաշտը՝ թույլ չենք տա, վոր ֆնասատուն դուրս գալով վարակված դաշտի սահմաններից՝ նոր բամբակի դաշտեր վարակի:

Պայքարի այս ձևը լավ է հատկապես այն գյուղերի համար, վորտեղ առուներն իրենք իրենց լցվում են գետնի տակից դուրս յեկած ջրով, և նրանց մեջ ընկած թրթուրները հեշտությամբ վոչնչանում են: Առուներ փորելը նպաստում է նաև այդ շրջանների կիսաճահճային հողերի արագ չորացման:

2. Վարակված դաշտում պետք է շաղ տալ թունավորված գրավչանյութ, վորը պատրաստելու համար վերցնում են յուրաքանչյուր 8 կիլոգրամամ քուսպի ալյուրին խառնում 400 գրամամ պարիզյան կանաչ և ջուր ավելացնելով այնքան խառնում, վոր ստացվի փուխը հողի նման գանգված: Գրավչանյութը պետք է պատրաստել յերեկոյան կողմ և անմիջապես շաղ տալ, վորովհետև թրթուրները սնվում են միայն մուխն ընկնելուց հետո:

Նրանք ուտելով գրավչանյութը՝ սատկում են:

Մեկ հեկտարի համար գրավչանյութ պատրաստելուն գնում է 50—60 կիլոգրամամ բամբակի քուսպի ալյուր և  $2\frac{1}{2}$ —3 կիլոգրամամ պարիզյան կանաչ:

Պայքարի այս ձևը լավ է նաև այն տեսակետից, վոր պայքարի հետ միասին պարարտացնում ենք արող բամբակի քուսպի ալլուրով:

Գրավչանյութը հարկավոր է շաղ տալ նախքան ցանքան սկսելը կամ ցանքսի հետ միասին և թեթև փոցխել: Այդ շուտ շաղ տալն ունի այն նպատակը, վոր նախքան բամբակի սերմերի ծլելն ուրիշ բան չգտնելով ուտելու՝ թըրթուրներն ուտում են շաղ տված թունավորված գրավչանյութը և սատկում:

Ուշացնել շաղ տալը, ինչպես հաճախ մեզ մոտ են անում, նշանակում է քիչ արդյունքի հասնել:

Շաղ տալու համար հարկավոր է գրավչանյութը լցնել առանձին պարկերի մեջ և ման գալով վարակված դաշտերի մեջ՝ շաղ տալ այնպես, ինչպես շաղացան ցորենն են ցանում:

### ԿԱՐԱԴՐԻՆԱ

Այս ֆնասատուն թեպետ ամեն տարի հանդես չի գալիս Հայաստանում բամբակի ցանքսերի մեջ, բայց յեղած տարիներում հսկայական ֆնաս է հասցնում բամբակի ցանքսերին: Բավական է հիշել միայն այն, վոր 1925 թ. Ղուրղուղուլու շրջանում 1000 հեկտար բամբակի ցանքս վարակված էր այս ֆնասատով,

վորից մեծապես տուժեցին այդ շրջանի բամբակագործները:

Այս տարի ևս կարադըրինան խոշոր մլասներ հասցրեց Հայաստանի զանազան վայրերում, բացի բամբակի ցանքսերից, նաև մի շարք ուրիշ կուլտուրական բույսերի, ինչպես, որինակ, կարտոֆիլին, ճակնդեղին, սոխիս, պամիդորին և այլն:

Այս մլասատունն ձմեռում է հարսնյակ վիճակում: Դրանցից գարնանը դուրս են գալիս թիթեռներ, վորոնք գիշերները թռչելով, նրատում են զանազան մոլախոտերի և բամբակի տերևների վրա, ածում են ձվեր՝ թվով 400—500 հատ: 3—4 որ անց այդ ձվերից դուրս են գալիս փոքրիկ թրթուրներ, վորոնք սկզբում սնվում են միայն բամբակի տերևի ցածի լերեսի մասով՝ չմլասելով տերևի վերևի թաղանթին:

Հետագայում թրթուրները մեծանալով՝ անցնում են ցերեկները հողի մեջ և դուրս գալով գիշերները՝ ուտում բամբակի տերևները, այս անգամ արդեն ուտելով ամբողջովին տերևը, թողնելով միայն նրա շղերը: Բացի տերևներից նրանք ուտում են նաև բամբակի կոկոնները:

Այս բոլորի հետևանքը լինում է այն, վոր բույսը զրկվելով տերևներից և կոկոններից՝

վատ եւ սնվում, վատ զարգանում և վատ ել բերք տալիս:

Նոր դուրս չեկած թրթուրները լինում են փոքր, կանաչ դույնի. մեծանալով ավելի մուգ դույն են ստանում: Թրթուրի մարմնի չերկարությամբ գնում են մուգ շերտեր, Հասակն առած թրթուրի մարմնի չերկարությունը հասնում եւ մինչև 2 սանախմետրի: Կարադրինան տարեկան տալիս եւ 3—4 սերունդ, վորոնցից ամենավտանգավորը 2-րդ սերունդն եւ, այսինքն այն թրթուրները, վորոնք դուրս են գալիս հունիս-հուլիս ամիսներին:

### Պայտար

1. Դաշտը պահել մուլախոտերից մաքուր:

2. Աշնանը խորը հերկ պիտի կատարել, վորովհետև, ինչպես վերևում ասացինք, թրթուրներն աշնանը անցնում են հողի մեջ, հարսնյակ են դառնում և այդպես ձմեռում: Աշնան խորը հերկը դուրս հանելով հարսնյակներին հողի յերես՝ լենթարկում ե ցրտի, վորից և նրանք չեն կարողանում դուրս գալ:

3. Լավ եւ բամբակի արտը ուշ աշնանը ջուր անել, վորը, բացի մի շարք ուրիշ ոգուտներից, մեծապես նպաստում ե նաև այս փրասատուի վոչնչացմանը:

4. Յեթե պայքարի վերև հիշած միջոցները ժամանակին և կանոնավոր չեն կատարված, և բամբակի դաշտում յերևում ե այս մնաստատուն, պետք ե ձեռնարկել քիմիական պայքարի կազմակերպման, վորը կայանում ե հետևյալում:

Վարակված դաշտը պետք ե սրսկել պարիզյան կանաչի լուծույթով, վորը պատրաստում են հետևյալ կերպ, յուրաքանչյուր մեկ վեդրո ջրին վերցնում են 30—35 գրամ պարիզյան կանաչի փոշի և կրկնակի քանակությամբ, այսինքն՝ 60—70 գրամ չհանգցրած, թարմ լավորակ կիր:

Առանձին ամանում ջրով բաց են անում պարիզյան կանաչը: Մի ուրիշ ամանի մեջ հանգցնում են կիրը և ավելացնում այնքան ջուր, վոր ստացվի կրակաթ, ապա այս յերկուսը խառնում են մնացած ջրի հետ և նույն որն ստացված հեղուկով սրսկում առանձին սրսկիչ մեքենաների միջոցով (վերմորել և այլն) բամբակի վարակված դաշտը: Սրսկումը պետք ե աշխատել կատարել խաղաղ ժամանակ, վորպեսզի թունավոր հեղուկը մնա տերևների վրա:

Թրթուրներն ուտելով թունավորված տերևները՝ սատկում են: Յեթե բամբակի արտը շատ ե մատաղ, այդ դեպքում այս հեղուկն առաջացնում ե տերևների վրա այրվածքներ:

դրա համար լավ ե փոշոտել ջիպսին կոչված փոշիով: Մեկ հեկտար վարակված արտը փոշոտելու համար վերցնում են 14—24 կիլոգրամ մ ջիպսինի փոշի, նալած բամբակի բույսերի մեծութիանը: Փոշոտումը պիտի կատարել նույն ձևով և նույն փոշոտիչ մեքենաներով, վորոնք գործադրվում են «չոռի» դեմ ծծմբի փոշին փոշոտելիս:

### ԿՆԳՈՒՂԻ ԹՐԹՈՒՐԸ (ՎՈՐԴԸ)

Այս մնասատուն, համեմատած մյուս մնասատունների հետ, ավելի քիչ ե տարածված Հայաստանում. Անդրկովկասում շատ ե տարածված Ադրբեջանում և հանդիսանում ե այնպիսի մնասատու, ինչպիսին մեզ մոտ «չոռի» տիգն ե:

Չմեռում ե հողի մեջ 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 վերջով խորութիան վրա, հարսնյակ վիճակում:

Հարսնյակներից վաղ գարնանը դուրս են գալիս թիթեռներ, վորոնք գիշերները թռչելով նստում են զանազան մուխիտների և բամբակի տերևների վրա, մեկական կամ կույտերով ձվեր են ածում: Ամեն մի թիթեռ իր կյանքի ընթացքում կարող ե ածել 500 և ավելի ձու, վորոնցից 3—5 որ անց դուրս են գալիս թռթռուրներ: Թրթուրներն սկզբնական շրջանում սնվում են բամբակի տերևներով և յերբ արդեն

բավականին մեծացել ու ժեղացել են, սկսում են ծակել և մտնել կոկոնների ու կնգուղների մեջ: Հետևանքը լինում է այն, վոր վնասված կոկոնները և կնգուղները չեն բացվում, և քիչ բերք է ստացվում: Ամեն մի վորդ իր կլանքի ընթացքում կարող է վնասել 10 - 15 կոկոն, և այդ է պատճառը, վոր նրանց բազմացման ու ժեղ տարիներում բամբակի բերքը կիսով չափ պակասում է:

Հայաստանի բամբակագործական շրջաններից տարածված է Ղուրղուղուլու շրջանում:

Թրթուրները լինում են զանազան գույնի՝ բաց մոխրագույն, կանաչավուն, բաց կարմրավուն և այլն:

Մարմինը ծածկված է մազիկներով և մարմնի ամբողջ յերկարությամբ յերկու կողքերից անցնում են մուգ շերտեր:

Տարվա ընթացքում տալիս է 4—5 սերունդ:

### Պայտա

1. Աշնանը խորը հերկ պետք է կատարել, վորպեսզի ձմեռող հարսնյակները կամ շատ խորը ընկնելով՝ չկարողանան դուրս գալ և կամ ընկնելով հողի յերեսը՝ վոչնչանան ձմռան ցրտերից:

2. Ամբողջ տարին պետք է դաշտը մաքուր պահել մոլախոտերից:

3. Վարակված դաշտում առանձին շերտերով պետք է ցանել յեգիպտացորեն: Յեգիպտացորեն ցանելու նպատակն այն է, վորպեսզի բամբակի դաշտում ստացվեն սավերոտ (շվաք) տեղեր, վորտեղ այս ֆնասատուների թիթեռները մեծ հաճույքով են ձուլ ածում: Ձվերից դուրս յեկած թիթեռները մնալով այդտեղ՝ կենտրոնանում են յեգիպտացորենի բույսերի վրա: Ձվերից դուրս յեկած թրթուրները անվում են յեգիպտացորենի ծաղիկների թելիկներով, մեծանում ուժեղանում են և մտնելով կողորձների (յեգիպտացորենի գլուխների) մեջ՝ ուտում հատիկները:

Վորպեսզի այս աշխատանքն արդյունք տա, պետք է շաբաթական մեկից յերկու անգամ նայել յեգիպտացորենի շերտերը և հավաքել նկատված թրթուրները և վոչնչացնել:

Հակառակ դեպքում թրթուրները նորից կարող են տարածվել բամբակի բույսերի վրա, և ֆնասն ավելի մեծ կստացվի:

Յեթե վերև հիշված պայքարի միջոցները ժամանակին և կանոնավոր չեն կատարվել, և դաշտում յերևում են կնգուղի թրթուրներ, պետք է դիմել պայքարի քիմիական միջոցների, վորի

համար պիտի վերցնել մկնդեղաթթվային կալցիումի փոշին և նրանով փոշոտել վարակված դաշտը: Փոշոտել հարկավոր ե այն ժամանակ, յերբ դեռ թրթուրները փոքր են և չեն մտել կնգուղների և կոկոնների մեջ:

Ուշացնելու դեպքում այս պայքարն արդյունք չի տա: Մեկ հեկտարին հարկավոր ե փոշոտել 16 — 24 կիլոգրամ մկնդեղաթթվային կալցիումի փոշի:

Փոշոտումը կատարվում ե նույն ձևով և գործիքներով, վորոնց մասին խոսեցինք «չոռի» դեմ պայքարելու մասին խոսելիս:

### ԲԱՄԲԱԿԻ ԼՎԻՃ (ՇԻՐԱ)

Բամբակի աճելու սկզբի շրջանում դաշտում նկատվում են թփեր, վորոնք աչքի յեն ընկնում նրանով, վոր ցողունի գագաթի աճող մասը կուչ յեկած սեղմված ե լինում, վորից և ցողունը չի աճում: Նոր դուրս յեկած տերևները ևս կուչ յեկած են լինում, և նրանց վերևի յերեսի կողմից նկատվում են ուռուցքներ:

Մրա պատճառը մանր, աչքով դժվար տեսանելի մուգ կանաչ գույնի միջատներ են, այսպես կոչված լվիճներ կամ բուսակախ վոջիլներ, վորոնք վաղ գարնանը բազմանալով մուլախոտերից անցնում են մատղաշ բամբակի

Թփերի վրա և այնքան են շատանում, վոր ծածկում են բամբակի տերևները և ցողունի վերևի մասերը: Նրանք իրենց բերանի ծծող մասերի ոգնությամբ ծծում են տերևի և մատաղ ցողունի հյութը, վորից և առաջանում են Թփի վերև նկարագրված այլանդակութունները:

Հետևանքը լինում է այն, վոր բամբակը զարգացման առաջին շրջանում թուլանում է և վատ զարգանում:

Աշնան մոտ տաք յեղանակներին լվիճներն արագ բազմանալով՝ այնքան են շատանում, վոր նրանց արտադրած շիրայի վրա, վորը թափվում է կնգուզների վրա, սկսում են զարգանալ զանազան սունկեր. վերջիններս փոտեցնելով բամբակի թելը՝ դցում են նրա վորակը, այսինքն նրանցից վատ գործվածքներ են ստացվում:

### Պ ա յ ք ա ր

1. Հարկավոր է ինչպես բամբակի, նույնպես և շրջակա միջնակներից հավաքել և վոչընչացնել բոլոր մոլախոտերը:

2. Լվիճով վարակված դաշտը պետք է սովորական կանաչ սապոնի լուծույթով սրակել:

Լուծույթը պատրաստելու համար վերցնում են 300 գրամ մ սապոն, լավ մանրացնում և ա-

ուանձին ամանում տաք ջրում լավ լուծելուց հետո խառնում մեկ վեդրո ջրի հետ և այդ լուծուկթով սրսկում վարակված դաշտերը:

Սրսկումը պետք է կատարել խաղաղ ժամանակ և աշխատել այնպես անել, վոր սապոնի լուծուկթի կաթիլներն ընկնեն լվիճների մարմինների վրա, վորից փակվելով նրանց շնչառության անցքերը՝ սատկում են:

Լվիճների դեմ կարելի յե կռվել նաև ծխախոտի եքստրակտով, վորը պատրաստում են հետևյալ կերպ:

Յուրաքանչյուր վեդրո ջրին պետք է խառնել 400 գրամ մ ծխախոտի մանրուկնք կամ հասարակ ծխախոտ (ղուլլասար) և թողնելով այդպես 24 ժամ 1 ժամ յեռացնել: Ստացված լուծուկթին ավելացնելով 100 գրամ սապոն՝ սրսկում են վարակված դաշտը:

Սրսկում են նույն ձևով և նույն գործիքներով, վորոնց մասին կարադրինայի դեմ պայքարելու մասին խոսելիս պատմեցինք:

Թունավոր նյութերով աշխատելիս պետք է զգուշ լինել:

Քիչ չեն այն դեպքերը, յերբ անզգուշության հետևանքով թունավորվում և սատկում են անասունները, դրա համար խիստ հսկողություն պիտի սահմանել այն դաշտերում, վոր-

տեղ թունավոր նյութեր են սրահված կամ շաղ  
տված, մինչև թուխի ազդեցությունը անցնի:


Թունավոր նյութերի հետ գործ ունեցող  
մարդիկ պետք է աշխատանքից հետո սապոնով  
մաքուր լվացվեն:

Աշտատանքից հետո գործադրված մեքե-  
նաները պետք է մաքուր սրբել, չորացնել և  
չոր տեղերում պահել, հակառակ դեպքում  
նրանք շատ շուտ կարող են փչանալ:

Մեքենաներ ձեռք բերելու համար հարկա-  
վոր է ժամանակին դիմել համապատասխան  
բամբակագործական ընկերություններին:

Բուլսերի հիվանդություններին վերաբերող  
բոլոր հարցերով պետք է դիմել Յերևան, Հոդ-  
ժողկոմատ, բուլսերի պաշտպանության կայանին  
կամ Բամբակմիության միջատաբանական բաժ-  
նին:

Շրջաններում նույն խնդիրներով կարե-  
լի յե դիմել գյուղատնտեսներին և վնասա-  
տուներին դեմ պայքարող հրահանգիչներին:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039177

ԸՍՅԳ)  
ԳԻՆԸ 4 ԿՈՊ. ՄԱՍ. (1/8)

1  
A 4298



---

Գ. Մարջանի Գ. Ասարի

Вредители хлопчатника в Армении  
и борьба против них

---

Госиздат СССР Армении  
Эривань—1930